



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. մարտին /վերլուծություն/

2009թ. մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 10974 գործարքներ, որոնց քանակը 2008թ. մարտի համեմատ նվազել է 16.0%-ով, իսկ 2009թ. փետրվարի համեմատ աճել՝ 6.6%-ով:

2009թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2903 օտարման գործարքների 75.9%-ը կազմել են առուվաճառքները, 23.2%-ը՝ նվիրատվությունները և 0.9%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 34.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 32.6%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2009թ. մարտին, 2009թ. փետրվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 5.5%-ով, իսկ 2008թ. մարտի համեմատ նվազել՝ 30.4%-ով:

2009թ. մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.6%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. մարտին, 2009թ. փետրվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.5%-ով, իսկ 2008թ. մարտի համեմատ նվազել՝ 31.6%-ով:

2009թ. մարտին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	մարտ 2008թ.	մարտ 2009թ.	փետրվար 2009թ.
Կենտրոն	466000	515600	482300
Արաբկիր	395600	388400	344400
Քանաքեռ-Զեյթուն	296900	299100	270200
Նոր-Նորք	263200	258600	241200
Ավան	260000	256700	241800
Էրեբունի	258000	271500	256600
Շենգավիթ	266900	264700	237300
Դավթաշեն	275000	279200	268400
Աջափնյակ	269900	254700	238700
Մալաթիա-Սեբաստիա	255200	245100	230600
Նուբարաշեն	146700	154700	148000
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	286700	289800	269000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. մարտին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. փետրվարի համեմատ աճել են 7.7%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա Երևան քաղաքում 2009թ. մարտին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. փետրվարի համեմատ կնվազեն շուրջ 9.7 տոկոսով :

2009թ. մարտին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 217 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. փետրվարի համեմատ նվազել է 15.6%-ով, իսկ 2008թ. մարտի համեմատ՝ 51.7%-ով:

2009թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մարտ 2008թ.	մարտ 2009թ.	փետրվար 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	116800	142300	135400

	Ապարան	32000	42300	36600
	Թալին	40700	49800	46800
Արարատ	Արտաշատ	91900	96800	89800
	Մասիս	124000	136500	151000
	Վեդի	76800	91100	87100
	Արարատ	58900	81500	77600
Արմավիր	Վաղարշապատ	159100	183200	167700
	Արմավիր	114700	127500	111100
	Մեծամոր	74600	85600	79400
Գեղարքունիք	Սևան	82500	101600	91900
	Գավառ	43900	56100	50500
	Մարտունի	65900	82200	75200
	Վարդենիս	29800	34800	33500
	Ճամբարակ	15800	17900	17300
Լոռի	Վանաձոր	84600	92800	93500
	Ստեփանավան	44700	56200	51200
	Մալիտակ	60300	74000	64400
	Ալավերդի	28300	36300	34100
	Տաշիր	29600	38100	34200
	Թումանյան	5600	6100	5800
	Շամլուղ	3200	3400	3200
	Ախթալա	12700	14000	13300
Կոտայք	Աբովյան	161300	152700	134700
	Նոր Հաճն	117200	136500	123300
	Բյուրեղավան	91100	112600	104500
	Եղվարդ	107500	127800	120300
	Հրազդան	62400	60000	67000
	Ծաղկաձոր	142500	182300	172500
	Չարենցավան	82900	87900	97500
Շիրակ	Գյումրի	88400	103000	113100
	Արթիկ	53500	65800	65800
	Մարալիկ	26300	32700	30700
Սյունիք	Գորիս	96600	128500	116700
	Կապան	83500	107400	97000
	Սիսիան	65600	97900	88500
	Մեղրի	45100	58300	53100
	Ագարակ	28800	35400	31400
	Քաջարան	44100	58100	51900
	Դաստակերտ	7000	8000	7000
Վայոց Ձոր	Վայք	70000	75800	82200
	Եղեգնաձոր	91000	115800	104500
	Ջերմուկ	123400	128600	125000
Տավուշ	Դիլիջան	82800	103000	89100
	Իջևան	115000	148400	150300
	Բերդ	37600	46000	39800
	Նոյեմբերյան	29900	36100	31200
	Այրում	21100	24400	21100

2009թ. մարտին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. փետրվարի համեմատ աճել են 5.8%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա 2009թ. մարտին

հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. փետրվարի համեմատ կնվազեն շուրջ 11.2 տոկոսով :

2009թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 263 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 54, մյուս մարզերում միասին վերցրած՝ 209: 2009թ. մարտին, 2009թ. փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 13.5%-ով, ընդ որում Երևանում՝ 16.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 12.6%-ով: 2008թ. մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 46.3%-ով, ընդ որում Երևանում՝ 41.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 47.4%-ով:

2009թ. մարտին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	մարտ 2008թ.	մարտ 2009թ.	փետրվար 2009թ.
Կենտրոն	487700	540000	492000
Արաբկիր	402700	432700	400700
Քանաքեռ Զեյթուն	308700	332500	304900
Նորք Մարաշ	272600	327100	299100
Ավան	271000	299500	277200
Էրեբունի	267600	305900	283500
Շենգավիթ	274700	300000	276700
Դավթաշեն	289700	328700	310000
Աջափնյակ	276300	294300	275700
Մալաթիա-Սեբաստիա	268700	289800	272000
Նուբարաշեն	156100	175300	162800
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	297800	329600	305000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. մարտին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. փետրվարի համեմատ աճել են 8.1%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա Երևան քաղաքում 2009թ. մարտին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. փետրվարի համեմատ կնվազեն շուրջ 9.4 տոկոսով :

2009թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մարտ 2008թ.	մարտ 2009թ.	փետրվար 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	121200	152400	143600
	Ապարան	34900	43400	38900
	Թալին	44500	53900	48900
Արարատ	Արտաշատ	98400	107700	103900
	Մասիս	126000	153400	153400
	Վեդի	82600	95600	90400
	Արարատ	64300	84700	79200
Արմավիր	Վաղարշապատ	161100	187200	174200
	Արմավիր	119000	130900	121100
Գեղարքունիք	Սևան	84500	108600	103100
	Գավառ	45600	60300	56500
	Մարտունի	68400	84500	78200
	Վարդենիս	32300	40400	37700
	Ճամբարակ	19600	22300	22300
Լոռի	Վանաձոր	89900	106800	105800
	Ստեփանավան	50200	59600	54600
	Սպիտակ	64400	75500	67500
	Ալավերդի	30800	39800	37100
	Տաշիր	33500	41200	38400
	Թումանյան	9400	10400	10400
	Շամլուղ	6300	7400	7400
	Ախթալա	15800	17200	16200
Կոտայք	Աբովյան	166200	178400	175400
	Նոր Հաճն	122500	146500	142500
	Բյուրեղավան	93500	122500	118700
	Եղվարդ	111800	136800	132200
	Հրազդան	65700	78300	78300
	Ծաղկաձոր	209000	281000	276000
	Չարենցավան	85100	101400	100400
Շիրակ	Գյումրի	95500	124200	124200
	Արթիկ	56300	70600	65800
	Մարալիկ	30100	35200	32700
Սյունիք	Գորիս	98600	134400	126400
	Կապան	87600	116400	109900
	Միսիան	69700	99400	90400
	Մեղրի	48500	60400	53800
	Ագարակ	31400	37400	33400
	Դաստակերտ	10100	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	75800	87500	87500
	Եղեգնաձոր	96600	120600	110800
	Ջերմուկ	73500	109500	103500
Տավուշ	Դիլիջան	88400	115900	115900
	Իջևան	118900	157000	153000
	Բերդ	40100	48100	42600
	Նոյեմբերյան	35200	38500	35500
	Այրում	22800	25800	23000

2009թ. մարտին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. փետրվարի համեմատ աճել են 4.8 % -ով: Մակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա 2009թ. մարտին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. փետրվարի համեմատ կնվազեն շուրջ 12.1 տոկոսով :

Ընդհանուր առմամբ, 2009թ. մարտին հանրապետությունում օտարվել են 1151 միավոր /898.45 հա/ հողեր, որից Երևանում` 69 միավոր /7.48 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 26 միավոր /1.33 հա/ հողեր, որից Երևանում` 18 միավոր /0.88 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 588 միավոր /838.59 հա/, որից Երևանում` 1 միավոր /0.05 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 327 միավոր /30.65 հա/, որից Երևանում` 41 միավոր /3.04 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 208 միավոր /15.35 հա/, որից Երևանում` 26 միավոր /4.37 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 20 միավոր /13.07 հա/, որից Երևանում` 1 միավոր /0.02 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 4 միավոր /0.44 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր` 4 միավոր /0.35 հա/ :

2009թ. մարտին հանրապետությունում օտարված հողերից 1023 միավորի /832.82 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում` 60 միավոր /6.37 հա/, նվիրատվության գործարքներ` 117 միավորի /63.19 հա/, որից Երևանում` 5 միավոր /0.42 հա/ և փոխանակության գործարքներ` 11 միավորի /2.44 հա/, որից Երևանում` 4 միավոր /0.70 հա/:

Հանրապետությունում 2009թ. մարտին, 2008թ. մարտի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 32.5%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 11.7%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 46.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 9.1%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում` 498.73 հա, որից 495.31 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.0%-ը կամ 246 գործարքներ /542.59 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում` 21 գործարքներ /2.69 հա/, իսկ 71.7%-ը կամ 733 միավորը /288.96 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում` 39 միավոր /3.68 հա/: 2009թ. մարտին հանրապետությունում գրանցվել են հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 44 գործարք /1.27 հա/:

Ստորև ներկայացվում է 2009թ. մարտին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի, որտեղ ներառված չեն

առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	4	0.25	17	2.44	1	0.05	1	0.02	32	2.37	5	1.24
Արագածոտն	32	460.02	0	0.00	0	0.00	8	0.79	50	35.29	0	0.00	26	2.49	1	0.12
Արարատ	4	6.79	0	0.00	0	0.00	9	0.05	78	31.47	1	4.00	47	4.24	6	0.22
Արմավիր	2	3.49	1	0.52	3	0.60	14	0.20	64	53.49	0	0.00	39	3.56	11	1.30
Գեղարքունիք	1	1.50	0	0.00	3	0.12	13	3.25	50	41.86	0	0.00	24	2.74	0	0.00
Լոռի	2	1.30	0	0.00	6	0.51	18	0.67	31	15.80	0	0.00	11	1.24	4	0.05
Կոտայք	9	14.00	16	8.08	1	0.004	5	0.08	80	27.19	1	0.45	42	3.46	6	0.93
Շիրակ	2	12.20	0	0.00	18	0.74	9	0.22	42	28.75	0	0.00	9	1.72	1	0.26
Սյունիք	5	1.19	0	0.00	0	0.00	1	0.002	12	9.32	0	0.00	4	0.21	1	0.02
Վայոց Ձոր	3	13.03	0	0.00	2	0.24	7	0.14	6	4.28	0	0.00	6	0.66	2	0.01
Տավուշ	5	8.97	0	0.00	4	0.34	18	0.51	25	8.28	0	0.00	7	0.69	4	1.01
Ընդամենը	65	522.49	17	8.60	41	2.80	119	8.35	439	255.78	3	4.47	247	23.38	41	5.16

Ստորև ներկայացվում է 2009թ. մարտին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Ուղղակի վաճառք</i>								<i>Աճուրդ վաճառք</i>									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	15	1.90	0	0.00	3	0.20	12	1.70	6	0.78	0	0.00	0	0.00	1	0.05	5	0.73
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	40	460.81	32	460.02	0	0.00	0	0.00	8	0.79
Արարատ	2	0.003	0	0.00	0	0.00	2	0.003	11	6.84	4	6.79	0	0.00	0	0.00	7	0.05
Արմավիր	4	0.01	0	0.00	0	0.00	4	0.01	15	4.53	1	3.22	1	0.52	3	0.60	10	0.19
Գեղարքունիք	2	0.13	0	0.00	0	0.00	2	0.13	15	4.74	1	1.50	0	0.00	3	0.12	11	3.12
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	26	2.47	2	1.30	0	0.00	6	0.51	18	0.66
Կոտայք	2	0.02	0	0.00	0	0.00	2	0.02	29	22.14	9	14.00	16	8.08	1	0.004	3	0.06
Շիրակ	5	0.22	0	0.00	3	0.12	2	0.10	24	12.94	2	12.20	0	0.00	15	0.61	7	0.13
Սյունիք	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	5	1.19	5	1.19	0	0.00	0	0.00	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	12	13.41	3	13.03	0	0.00	2	0.24	7	0.14
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	27	9.82	5	8.97	0	0.00	4	0.34	18	0.51
Ընդամենը	31	2.29	0	0.00	6	0.32	25	1.97	210	539.67	64	522.22	17	8.60	35	2.47	94	6.38

Հանրապետությունում 2009թ. մարտին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք /0.27 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. մարտին, 2008թ. մարտի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 63.1%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 45.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել է 63.4%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 59.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 78.4%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 59.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 6.3%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. մարտին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	8	7.52	73.3	379.9	167.6	36	23.93	365.0	12000.0	4121.5
Ապարան	1	2.50	119.7	119.7	119.7	1	0.05	86.5	2727.3	492.2
Թալին	23	450.00	34.0	48.9	35.2	12	11.05	93.6	5494.5	501.0
Ծաղկահովիտ								79.5	1000.0	220.0
Արարատի մարզ										
Արտաշատ	4	6.79	2252.5	2590.4	2352.5	37	11.15	335.1	10833.3	2007.4
Մասիս						17	5.29	200.0	11904.8	2832.6
Վեդի						23	14.47	207.0	10795.1	1828.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	3.22	54.9	54.9	54.9	23	16.31	294.3	9090.0	1100.5
Բաղրամյան						9	19.93	90.6	2561.1	645.8
Վաղարշապատ						32	17.25	444.4	11764.7	2483.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						34	13.22	199.8	1875.0	448.5
Ճամբարակ						9	8.64	60.5	953.3	214.8
Մարտունի						1	0.29	51.1	2850.0	538.2
Սևան	1	1.50	197.0	197.0	197.0			52.2	2134.8	212.5
Վարդենիս						6	19.71	41.2	2575.1	358.8
Լոռու մարզ										
Ալավերդի						14	8.03	170.4	6424.2	1070.2
Գուգարք	1	0.40	400.0	400.0	400.0			234.6	6065.9	1068.8
Սպիտակ	1	0.90	648.3	648.3	648.3			250.0	5555.5	575.3
Ստեփանավան						2	0.93	90.6	1686.6	415.8
Տաշիր						15	6.84	45.3	1384.4	218.2
Վոտայքի մարզ										
Աբովյան	3	1.96	88.3	1316.6	557.8	29	8.58	279.3	11942.7	4820.4
Եղվարդ	3	8.14	228.7	646.8	371.8	36	11.67	174.4	11971.8	3362.1
Հրազդան	3	3.90	195.0	843.8	425.0	14	6.78	130.5	10256.4	1386.9
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	12.20	448.4	448.4	448.4	4	6.13	252.0	1693.1	480.5

Ամսսիա						6	6.07	40.9	261.0	133.5
Անի						7	7.32	110.6	546.9	287.8
Աշոցք						8	7.24	58.5	215.8	126.3
Արթիկ						17	1.99	79.4	1428.6	209.6
Սյունիքի մարզ										
Գորիս	5	1.19	1211.0	1221.0	1221.0	2	3.03	92.6	1023.2	430.3
Կապան								120.0	841.6	258.8
Մեղրի						5	0.82	193.0	3000.0	560.8
Սիսիան						5	5.47	46.3	1977.4	292.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	0.33	45.5	45.5	45.5	2	0.38	125.0	10000.0	1440.8
Վայք	2	12.70	35.4	35.4	35.4	3	3.54	58.8	1430.7	515.0
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.70	519.6	519.6	519.6	7	1.47	213.3	3783.8	462.8
Իջևան	4	8.27	49.3	885.5	288.7	2	1.82	267.5	9454.5	962.5
Նոյեմբերյան						16	4.99	46.7	7368.4	708.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. մարտին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						24	22603.0	130.7	22200.0	2574.0
Ապարան						2	2342.0	124.1	609.6	235.0
Թալին								63.2	1454.8	122.5
Ծաղկահովիտ								60.0	214.3	75.1
Արարատի մարզ										
Արտաշատ						9	9310.0	173.9	7140.3	927.0
Մասիս						16	12573.0	187.5	25000.0	1221.0
Վեդի						22	20513.0	126.1	5000.0	680.4
Արմավիրի մարզ										
Արմավիր						10	9369.0	131.6	9090.9	1220.0
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	163.5
Վաղարշապատ	3	5955.0	1004.9	1004.9	1004.9	28	24989.0	197.4	26528.4	1562.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	2960.0	186.6	1084.3	420.2
Ճամբարակ						1	940.0	71.3	2286.2	118.8
Մարտունի	3	1232.0	113.8	118.4	116.8	15	16265.0	119.3	5000.0	272.8
Սևան								240.0	3110.4	193.0
Վարդենիս						5	7188.0	72.5	987.2	140.0
Լոռու մարզ										
Ալավերդի						2	2737.0	114.3	1388.9	168.8

Գուզարք						4	3277.0	77.9	14083.3	675.7
Սպիտակ	5	4710.0	95.0	123.6	116.6	1	430.0	104.9	1348.3	162.0
Ստեփանավան	1	400.0	554.5	554.5	554.5	4	5952.0	88.2	1666.7	130.2
Տաշիր								45.3	400.0	74.8
Կոտայքի մարզ										
Արովյան						23	21245.0	264.5	35353.5	2090.2
Եղվարդ	1	39.0	1617.2	1617.2	1617.2	14	9659.0	173.6	27000.0	2510.0
Հրազդան						5	3704.0	117.7	34848.5	1355.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	7	1432.0	1500.0	3846.2	2508.9	4	5770.0	113.6	18750.0	335.1
Ամախիա								45.3	274.7	71.0
Անի	6	3993.3	88.0	508.5	327.3	4	5037.0	67.9	180.6	110.0
Աշոցք						1	6380.0	40.8	144.0	59.1
Արթիկ	2	700.0	38.8	70.2	54.5			111.8	5000.0	212.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	690.0	112.2	1700.0	272.6
Կապան								67.9	2638.9	220.0
Մեղրի						3	1400.0	68.5	632.9	139.0
Սիսիան								123.5	875.0	155.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	2400.0	45.4	45.4	45.4	4	5440.0	96.7	7659.6	365.5
Վայք						2	1150.0	120.7	1448.3	141.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	91.5
Իջևան	4	3418.0	1633.3	2308.5	1847.9	6	5370.0	74.1	14423.1	479.1
Նոյեմբերյան						1	1520.0	125.0	1948.1	157.1

2009թ. մարտին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 15 գործարքներ 9.88 հա մակերեսով, ընդ որում 10-ը՝ /9.46 հա/ Շիրակի և 5-ը՝ /0.42 հա/ Լոռու մարզերում:

2009թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1163 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 82.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2009թ. մարտին 2009թ. փետրվարի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 9.7%-ով, իսկ 2008թ. մարտի համեմատ՝ 16.4%-ով:

2009թ. մարտին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 88 բնակարանների, 51 անհատական բնակելի տների, 633 հասարակական, 66 արտադրական նշանակության օբյեկտների, 310 միավոր /560.48 հա/ հողերի և 15 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. մարտին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 25 վարձակալության գործարքների /այդ թվում 13 միավոր /0.04հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2009թ. փետրվարի համեմատ աճել է 2.1 անգամ, իսկ 2008թ. մարտի համեմատ նվազել՝ 26.5%-ով: 2009թ. մարտին հանրապետությունում վարձակալված 560.48 հա հողերից 6.87 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 553.61 հա հողերի 6.91 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 344.23 հա, որից 344.17 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 8.65 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. մարտին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	2	6.83
Արարատ	1	0.65	7	11.62
Արմավիր	0	0.00	5	13.82
Գեղարքունիք	0	0.00	60	344.17
Լոռի	2	8.00	1	2.94
Կոտայք	0	0.00	3	7.94
Շիրակ	0	0.00	48	114.41
Սյունիք	0	0.00	2	10.20
Վայոց Ձոր	0	0.00	63	11.45
Տավուշ	0	0.00	6	2.94
Ընդամենը	3	8.65	197	526.32

2009թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1013 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.2%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. փետրվարի համեմատ աճել է 7.5%-ով, իսկ 2008թ. մարտի համեմատ նվազել՝ 54.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /40.4%/, առանձնատների /22.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.6%/ և հողերի /18.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 444 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. փետրվարի համեմատ աճել է 2.5%-ով, իսկ 2008թ. մարտի համեմատ նվազել՝ 48.4%-ով:

2009թ. մարտին հանրապետությունում գրավադրվել են 2666.42 հա հողեր, որից 3.49 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 99.4%-ը կամ 2650.57 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 2231.11 հա, որից 2230.98 հա գյուղատնտեսական նշանակության:

2009թ. մարտին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 36 գործարքներ, որից 31-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 75.0%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 19.4%-ն՝ անհատական բնակելի տների, 2.8%-ը՝ այգետնակների և 2.8%-ը՝ հողերի նկատմամբ: 2009թ. փետրվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 7.7%-ով, ընդ որում Երևանում աճել՝ 19.2%-ով, մյուս մարզերում նվազել՝ 61.5%-ով, իսկ 2008թ. մարտի համեմատ նվազել է 83.0%-ով, ընդ որում Երևանում՝ 78.6%-ով, մյուս մարզերում՝ 92.5%-ով:

2009թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են հասարակական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 5 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: Մասնավորեցման գործարքների քանակը

2009թ. փետրվարի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2008թ. մարտի համեմատ նվազել՝ 28.6%-ով: 2009թ. մարտին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 2-ական՝ Լոռվա և Շիրակի, 1-ը՝ Գեղարքունիքի մարզերում:

2009թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1800 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2009թ. փետրվարի համեմատ աճել է 21.5%-ով, իսկ 2008թ. մարտի համեմատ նվազել՝ 19.2%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /32.9%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն